

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅԻ

(Церковный Вѣстникъ (№ № 41, 42, 43)

Ռ Ո Ւ Ս Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Ռուս Սրբազան Սինոդի կարգադրութեամբ 1910 թ. յունիսի 13-26-ը կազանում գումարուելու է միսիոներական քարոզչական ժողով: Ժողովի պատուաւոր նախագահ նշանակուած է Մոսկվայի միտրոպոլիտ Վլադիմիրը, բայց իսկական նախագահող լինելու է կազանի արքեպիսկոպոս Նիկանօրը:

Ժողովի խորհրդակցութեան նիւթը լինելու է օտարադաւաններին քրիստոնէական հոգով լուսաւորելու համար հոգալ, այդ օտարադաւանների վերաբերութեամբ քարոզչական ձեռնարկութիւնների, գրական և հրատարակչական գործունէութեան, հակալաժայական միսիայի և թուրքեստանի մահմետականութեան դէմ մաքառման մասին միջոցներ ձեռք առնել:

— Պօչայեի միսիոներական ժողովը, տեղական պայմանները ի նկատի ունենալով՝ որոշել է խնդրել թեմ. իշխանութեան միջոցով, որ Սրբ. Սինոդը Վօլինի թեմ. դպրոցում հերձուածները հերքող դասերի տեղ աւելացնի հերետիկոսութիւնը հերքող դասեր: Ժողովը անհրաժեշտ է գտել անմիջապէս ձեռնարկել միսիոներական թերթեր և տետրակներ հրատարակել: Ժողովը որոշում է, որ շրջանային քարոզիչները վարելով քարոզչական գործը իրանց շրջանում և լինելով թեմական քարոզիչների օգնականները, հերետիկոսների հետ ընդդիմախօսելու գնան միմիայն թեմական իշխանութեան, կամ բարեկարգչի առաջադրութեամբ և կամ տեղական քահանայի հրաւերով:

— Նովոգորոդի «Թեմ. Համբաւաբերում» (Новгор. Епарх. Вѣст. № 40) «Մեր թշնամիները դպրոցում» յօ-

դուածում, յօգուածագիրը հաւատացնում է, որ քրիստոնէական հաւատի ու նրա պաշտօնեաների թշնամիները են ոչ միայն հաւատի մէջ թոյլ կամ անհաւատ ուսուցիչները, որոնք կործանում են ժողովրդի հաւատն ու բարեպաշտութիւնը և յարդանքը դէպի հոգեւորականները. — այդպիսի ուսուցիչները, անկասկած շատ քիչ են եկեղեցուն, և նրանց դէմ պէտք է մաքառել ունեն միջոցներով, ի բայ առեալ բանաստեղծութիւնը, մատնութիւնը, և ոստիկանական միջոցները. — քրիստոնէական հաւատի համար առաջին և գլխաւոր թշնամիները դպրոցում են ծոյլ կրօնուսոյցները, որոնք դպրոցներում անհոգութեամբ են վերաբերում դէպի կրօնի դասաւանդութիւնը և մոռանում են, որ դպրոցները առաջին և գլխաւոր տեղն են, ուր քահանան կարող է ծանօթանալ իւր հօտի հետ, սերմանել բարի սերմեր մանուկների անարատ հոգու մէջ:

Գաւառական զեմստւոնների (ինքնաւարութեան) հաշիւները պերճախօս վկաներն են կրօնուսոյցների դպրոցական գործունէութեան:

Հին ժամանակները այնպիսի կրօնուսոյցներ կային, որ տարուայ մէջ մի անգամ էլ չէին դպրոց մտնում. ի դուր չէ, որ շատ զեմստւոններում, ի նախատինս հոգեւորականութեան, որոշուած է կրօնի համար աւանդուած դասերի թուի համեմատ վարձ վճարել, և այս «մտրակը» օգուտ է բերել. կրօնուսոյցները սկսել են շուտ շուտ յաճախել դպրոց: Յօգուածի հեղինակն որ քահանայ է, այն համոզման է գալիս, որ ժողովրդական դպրոցում և ծուխի մէջ հաւատի և բարեպաշտութեան անկման գործում ի դուր են այնքան շատ մեղադրում ժողովրդական ուսուցչին և աշխատում յանցանքի բոլոր ծանրութիւնը նրա վերայ ձգել: Գլխաւոր մեղքը և պատասխանատուութիւնը ընկնում է քահանաների վերայ, դրա համար էլ նա այսպիսի միտք է յայտնում. «Վատ չէր լինի, եթէ մեր հոգեւոր իշխանութիւնը, բարեկարգիչների միջոցով, փոխանակ ծխական քահանաների երբէք չը կատարած հսկումների ու նախատեսակների մա-

սին բոլորովին անպէտք հաշիւների, պահանջէր ծխական բոլոր դպրոցներում քահանայի տուած կրօնի դասերի թուի մասին զեկուցում:

— Ինչ որ ցանկանում է Նավգորոդի քահանան, նոյնը ձգտում են իրաւագործել Քիշնևի թեմում: Երևում է, որ միայն Նավգորոդի կրօնուսոյցները չէ որ անհոգ են:

Քիշնևի եպիսկոպոսը իւր թեմի զեմստւոյական և նախարարական դպրոցներում կրօնի անթերի դասաւանդման համար կրօնուսոյց քահանաների և նրանց օգնականների վերայ յատուկ հսկողութիւն է նշանակել: Կրօնուսոյցների գործունէութեան վերայ հսկողութիւնը յանձնուած է բարեկարգիչների օգնականներին, որոնք իրանց իրաւասութեան շրջանում պարտաւոր են այցելել դպրոցները ւերեք անգամ՝ տարուայ սկզբում՝ դասաւանդութիւնը կազմակերպելու համար, տարուայ մէջը՝ վերստուգելու կրօնի դասաւանդութիւնը և տարուայ վերջը՝ քննութեան համար: Իսկ բարեկարգիչների օգնականների գործունէութեան վերայ հսկողութիւնը, իրանց սեպհական ծխերում, յանձնուած է եկեղեցական-ծխական դպրոցների գաւառական տեսուչներին: Կրօնի ուսուցիչ քահանաների գործունէութեան վերայ հսկողութիւնը վարձատրելու համար նահանգական զեմստւոյից 4 հազար ռուբլու վարձ է խնդրուած, այնպէս որ, ամեն մի դպրոցի համար հսկողները պէտք է ստանան տարուայ վերջը, կոնսիստորիայի միջոցով, 5-7 ռուբլի: Նոր նշանակուած հսկողները պէտք է ներկայացնեն եպիսկոպոսին մանրամասն հաշիւներ: Կասկած չը կայ, որ կրօնի դասաւանդութեան մէջ զանցառութիւնը չափազանց տխուր երևոյթ է, մանաւանդ այժմ, երբ հակակրօնական քամիները ընդարձակ ծաւալ են դտել ժողովրդի մէջ: Բայց միւս կողմից, անհրաժեշտ է ամեն մի առանձին դէպքում քննել զանցառութեան իսկական պատճառները, հեռացնել այդ պատճառները, և միայն տպացուցուած դէպքում արգէն յանցաւորին ենթարկել իշխանութեան տնօրէնութեան հետեւանքին:

Ծխական բաղմաղան օրինակատարութիւնները շատ անգամ արգելք են լինում քահանային կրօնի դասաւանդութեան պարտքը բարեխղճութեամբ կատարելու։ Իսկ քահանան ինչ է ստանում դպրոցներում իւր աշխատանքի համար։ Ապաքէն նախարարութիւնը ամեն մի դպրոցին նշանակել է կրօնի համար տարեկան ընդ ամենը 30 ռ. Միթէ կարելի է այդպէս ցած գնահատել քահանայի աշխատանքը և մի և նոյն ժամանակ պահանջել անպայման ճշտապահութիւն։ Եթէ կրօնի դասաւանդութիւնը վերաբերում է ծխական քահանայի իսկական պարտականութեանը, այն ժամանակ պէտք չէ որ և է առանձին վարձ տալ քահանային կրօնի դասաւանդութեան համար։ Բայց այդ դէպքում նրա դիրքը դպրոցում հիմնովին պէտք է փոխուի, տալով նրան հնարաւորութիւն դպրոցում մանուկների վերայ ընդարձակ ազդեցութիւն ունենալու։ Բայց եթէ ծխական քահանայի բոլոր ուղղակի պարտաւորութիւնները անվճար դարձնենք, նա ինչ միջոցներով պէտք է ապրի։ Աւելի լաւ չի լինի զեմստովոյի սահմանած 4 հազար ռ. նշանակել աւելացնելու կրօնասոյցների վարձատրութիւնը, քան ստեղծել դեռ մի իշխանութեան կարգ էլ։

Այս օրերում վերջացան երեք համախմբումներ, կամ ժողովներ օրոնց որոշումները անկասկած՝ այսպէս կամ այնպէս, հասարակական-պետական հասունացած խնդիրների լուծման վերայ կարող են ազդել։

Ա. Միապետականների համախմբումն Մոսկվայում հաւատի և եկեղեցու վերաբերութեամբ մի շարք որոշումներ է արել։ Համախմբումն որոշել է.

1. Որ պրուստլաւ հաւատի և եղեղեցու բոլոր խընդիրներում Սրբ. Սինօդը մնայ միակ բարձր ինստանցիան, որտեղից և ծագէին այդպիսի խնդիրները, և այդտեղից էլ մատուցուէին անմիջապէս ի բարեհայեցողութիւն միապետի.

2. Որ պետական բարձր հաստատութիւնները մտած

դաւանական օրինագծերը «Հիմնական օրէնքի» 64 և 65 յօդուածների համեմատ առաջարկուէին Սրբ. Սինօդին, իւր եզրակացութեամբ Թագաւոր Կայսրի բարեհայեցողութեան անմիջապէս ներկայացնելու համար.

3. Որ պետութեան մէջ անշեղ պահպանուէին խղճի ազատութեան և նրա սահմանների պահպանութեան հիմնական օրէնքների վաւերացուած կանոնները:

Բ. Եկեղեցու վարչութեան համար համախմբումն որոշել է.

1. Որ Թագաւոր Կայսրի ներկայացուցիչը եկեղեցում և Սրբ. Սինօդում լինի եկեղեցու և նրա մէջ նորին Կայսերական Մեծութեան բռնած դիրքի բարձրութեանը արժանիք ունեցող, այսինքն իւր գաղափարական գործառնութեան մէջ մինիստրների խորհրդից անկախ անձն.

2. Որ Կայսրի ներկայացուցիչը եկեղեցում, եկեղեցու ներքին գործերում՝ պետութեան և նրա արտաքին կացութեան համեմատ նախարարների խորհրդի քաղաքականութեան պատուաստողը չը հանդիսանայ. այլ անշեղ իրագործի «Հիմնական օրէնքի մէջ սահմանուած» (յօդ. 64) կանոնները և եկեղեցու վերաբերութեամբ Թագաւոր Կայսրի պատուէրները, լինի եկեղեցու շահերը պաշտպանող՝ պետական բարձր հաստատութիւնների մէջ.

3. Որ Սրբ. Սինօդը իրաւունք ունենայ իւր նախանշածի միջոցով ուղղակի զեկուցանել Թագաւոր Կայսրին առանձին կարեւոր գործերը եկեղեցու կարիքների համար:

Բաց յայտմանէ, անհրաժեշտ է համարուել, որ Սիրիի արտաքին միսիայի գործերի համար կազմուի մօտիկ ապագայում համախմբումն, որ կամչատկայում հաստատուի եպիսկոպոսական աթոռ. որ Սիրիի քարոզչական հաստատութիւնների թոշակները միսիօներական ընկերութեան փոխարէն՝ վճարի պետական դանձարանը, որ միսիօներական ընկերութեան միջոցները զօրեղացնելու համար արտաքին գործառնութեան համար յատկացուի տարեկան 200 հազար ռուբլի. որ իւրաքանչիւր տարի 24 հազար ռուբլի յատկացուի սրբազնագործ և ստորին

եկեղեցական պաշտօնեաներ պատրաստելու Վլադիմիր-սոսկի քարոզչական դպրոցում: — Վերջապէս, պետական հարցերի մասին համախմբումն որոշեց միջնորդել, որ Վերօրգեան նահանգը միացուի ռուսական նահանգներին. Փինլանդական ճանապարհները միացնուեն ռուսական ճանապարհներին. Փինլանդացիները մասնակցեն պետական պաշտպանութեան ծախսերին. հրէաները ռուս դօրքի մէջ չընդունուեն, այլ զինուորական ծառայութեան փոխարէն դրամ վճարեն. Կովկասը, Միջին-Ասիան, և Մերձ-Բալտեան նահանգները բացուեն ռուս գաղթականութեան համար. քաղաքական յանցաւորները Ռուսաստանի հիւսիս չաքսորուեն. Խօլմեան Ռուսը բաժանուի Մերձ—Վիսլեան նահանգներից:

Գ. — Արեւմտ-Ռուս համախմբումն կրելում քննելով արեւմտեան տասն նահանգներում ընտրական զեմստվո մտցնելու կառավարչական նախագիծը, գտաւ, որ օրինադի հիմնական սկզբունքները համապատասխանում են պետական նպատակներին ու նահանգների ու գաւառների մեծ մասի տեղական պայմաններին: Համախմբումն ողջունում է ընտրական ժողովների բաժանումն ընտրողների ազդութեանց համեմատ և կարծում է, որ միայն այս ճանապարհով կարելի է մի կողմից ապահովել ռուսների շահերը արեւմտեան ծայրերկրում, միւս կողմից՝ թուլացնել ազգայնական պառակտումները, որ աւելի բորբոքւում է միահամուռ ընտրութիւնների ժամանակ. շատ անգամ անհնարին դարձնելով խաղաղ աշխատանքը զեմստւոյական գործում: Համախմբումն գտաւ, որ պրաւօսլաւ հոգեւորականութիւնը յանուն իւր վաստակների Արեւմտեան Ռուսիայում ինչպէս հին ժամանակները նոյնպէս և մօտիկ անցեալում, այսպէս և ազգաբնակչութեան մօտիկ լինելու, և գիւղը լաւ ճանաչելուն համար պէտք է մտցնուի զեմսկի ժողովների մէջ, 1864 թ. զեմսկի կանոնադրութեան կիրարկութեամբ: Համախմբումն հակառակ է, որ հրէաները զեմսկի որ և է պաշտօնի մէջ ընդունուեն. Լեհացիների վերաբերութեամբ համախմբումն

կարծում է, որ կարելի է նրանց ծառայութեան մէջ ընդունել նահանգի և գաւառի ազգաբնակչութեան համապատասխան իւր տոկոսին, այն պայմանով, որ ոչ մի տեղ չեն ծառայողների թիւը տասն տոկոսից չը գերազանցի: Գաւառական վարչութիւնների նախագահները պէտք է լինեն ուսւ ծագումից, ի նկատի ունելով, որ Վիլնայի և Կովենի նահանգներում ուսական պետութեան շահերին համապատասխանող պայմաններ չըկան, և այսպիսի հանգամանքում՝ ընտրական զեմստուօները կը լինէին հզօր միջոցներ լեհացնելու պետութեան այս մասերը, ուստի համախմբումն յայտնեց, որ անհրաժեշտ է բոլորովին թոյլ չը տալ ընտրական զեմստուօ, որի համար և հեռագրեց նախարարների խորհրդի նախագահին:

Պետական խորհրդի անդամ ընտրելու համար համախմբումն որոշեց միջնորդել որ Արեւմտեան Ռուսիայի ինն նահանգներից իւրաքանչիւրի ուսւ տարրերը միւս ազգութիւններից անջատ ընտրեն Պետական խորհրդի իրանց ներկայացուցիչը:

— 17 հոկտեմբերեանների ներկայացուցիչների Մոսկովայի համախմբման ժամանակ ուրախութեամբ ընդունուել է Գր. Կոմարովսկու զեկուցումն գաւառական հարցի մասին: Ռուս հոգեւոր վարչութիւնը, զեկուցանողի կարծիքով, իշխանութեան խնամակալութեան և ժողովրդի անջատուած լինելու պատճառով, չունի անկախութիւն և պատշաճ հեղինակութիւն, և չի կարող վստահութեամբ իւր վերայ առնել եկեղեցու պայծառութեան գործը:

Եթէ այն յանձնուի պետութեանը, եկեղեցին կը դառնայ պետական հաստատութիւն, ինչպէս այդ եղել է Սրբ. Սինօդի հաստատութեան օրից սկսած, եկեղեցին ներկայացնող միակ օրգանը կարող է լինել համառուսական ժողովը, միայն նա կարող է կարգաւորել եկեղեցին, միայն նա ունի հեղինակութիւն և իրաւունք: Համառուսական ժողովը ներկայացնում է միակ միջոցը, որ կարող է բառնալ պակասութիւնները և եկեղեցին կարգաւորել, նա միայն կարող է ցոյց տալ կառավարութեանը նրա

ազդեցութեան սահմանը, կենդանացնել նոյն իսկ եկեղեցու ուժերը: Զեկուցանողը համամիժմանը առաջարկեց հարցերի ծրագիրը, որ պէտք է մտնի 17-Հոկտեմբերեան-ների ծրագրի մէջ, ուր սրոշուած չէր պետութեան յարաբերութիւնը հաւատոյ գործերի վերաբերութեամբ: Գր. Կոմարովսկու ծրագրի էութիւնն է: Պետութեան իրաւական յարաբերութիւնը դէպի հաւատոյ գործերը պէտք է լինի՝ ապահովել ժողովրդի խղճի ազատութիւնը և չը միջամտել կրօնական համայնքների ներքին կեանքին: Միւս կողմից ինչպէս անհատները, նոյնպէս և կրօնական համայնքները պարտաւոր են հնազանդել իշխանութեանը, յարգել օրէնքը և կրօնի պատրուակով չը խօսափել քաղաքացիական ընդհանուր պարտականութիւններից: Կրօնների շարքում ունի պրաւօսլաւ եկեղեցին, իւր պատմական ծառայութիւնների համար պէտք է վայելի օրէնքի առանձին հովանաւորութիւնը. օրէնքը պէտք է ընդունի պրաւօսլաւ եկեղեցու առաջնութիւնն ու պետական լինելը: Ամեն մի չափահաս իւր համոզմամբ կարող է ընտրել իւր համար հաւատ կամ դաւանութիւն և միշտ էլ ազատութիւն պէտք է ունենայ մի դաւանութիւնից միւսն անցնելու, ուստի պատակները իրաւունք ունեն պսակուել, որդիքը դաստիարակել, ննջեցեալները թաղել իրանց դաւանութեան ձէսերով կամ քաղաքական օրէնքի կանոնների համեմատ. եկեղեցական համայնքներ կամ կրօնական ընկերութիւններ կարող են լինել ծանուցանելու կարգով (явочнымъ порядкомъ), բայց օրէնքի պահանջներին համեմատ: Ընկերակցութիւնները, որոնք օրէնքի հակառակ են, անբարոյականացուցիչ կամ հակակրօնական են և կոմ. խօսափում են ընդհանուր քաղաքացիական պարտաւորութիւններից, չեն թոյլատրում և խափանում են: Կրօնական համայնքներին թոյլատրում է հրապարակական աստուածապաշտութիւնը, ձէսեր կատարելը ևն: Պրաւօսլաւ եկեղեցու առաջնութիւնն ու տիրող լինելը միւս կրօնների վերայ ճշշում գործելու և հետամտութեան յատկութիւն պէտք է չունենայ: Պետութեան

յարաբերութիւնը դէպի պրաւօսլաւ եկեղեցին պէտք է լինի բարեացակամ և քաջալերող եկեղեցու անկախ ներքին գործունէութեան մէջ: Ի մասնաւորի, պրաւօսլաւ եկեղեցին պէտք է ազատուի ամեն մի պաշտօնական հովանաւորութիւնից: Եկեղեցու այժմեան կացութիւնը պահանջում է ամեն մասում բարենորոգումն:

Նրան պէտք է վերադարձնուի կառավարելու ազատութիւն եկեղեցական կանոններին համեմատ և պէտք է ապահովուի ընտրական սկզբունքը թէ ծխական կազմութեան և թէ ամեն կարգի հոգևոր տնձանց նշանակուելու ժամանակ, պրաւօսլաւ աշխարհական համայնքին պէտք է թոյլտուութիւն լինի եկեղեցական գործերում գործունեայ մասնակցութիւն ունենալ: Պետութիւնը պէտք է լինի գիւղական մոռացուած հոգևորականութեան օգնող, ոչ պակաս անհրաժեշտ է հոգևոր դպրոցների վերակազմութիւնը:

— Լուսաւորութեան նախարարութիւնը աշխարհիկ դպրոցների ուսուցիչների և պաշտօնեաների ոտճիկները աւելացնելու համար ծրագիր է ներկայացրել Պետական գումային, այս տախթով Церковный Вѣстник-ը հոգևոր դպրոցների և կրօնուսոյցների համար գրում է. «Ճշմարիտ է, վերջին ժամանակներս մեծ ազմուկ բարձրացաւ հոգևոր դպրոցների վաստակաւորների ապագայ երջանկութեան մասին, բայց հետևանքը եղաւ չնչին աւելացումն: Այս կարևոր գործի մասին կենդրոնական վարչութեան նոյն իսկ որոշումն տհաճութիւն է առաջ բերում: Հոգևոր դպրոցական հաստատութիւնների ուսուցիչների լաւ գրութիւն ունենալու մասին հոգևոր իշխանութիւնը նշանաւորացուցիչ ձևով է խօսում. որպէս թէ նա ինքն էլ վստահ չէ, որ հոգևոր դպրոցական հաստատութիւնների դասատուները լուրջ և կարևոր գործ են կատարում, և արժանի են հաւասարուել աշխարհական դպրոցների դասատուների կարգին: Իշխանութեան վարժուների համեմատ էլ ստորագրեալները ստանում են միայն չնչին գումար: Անհրաժեշտ է, որ հոգևոր վարչութեան կենդ-

բօնական իշխանութիւնը ինքն համակրութեամբ վերաբերուէր հոգևոր դպրոցների դասատուների վաստակին և ըստ արժանւոյն գնահատէր. այն ժամանակ միայն կարելի էր սպասել արդարացի վերաբերմունք ուրիշների կողմից. ժամանակ է վերջ դնել կեղծաւոր հառաչանքներին և խօսքերին, թէ հոգևոր դպրոցի դասատուները պէտք է ճգնաւորներ լինին, որովհետև այդ նշանակում է ուրիշի ուսերին ծանր բեռներ դնել, որը այդ հառաչանք արձակողները մատով անգամ չեն ուզում չարժեք:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՕՐԹՈԳՈՒԹՍ ԵԿԵԼԵՑԻ

Կ. Պօլսոյ յունաց պատրիարք Յովակիմ Գ. և Սինօդը գիմել են միտրօպօլիտներին շրջաբերական թղթով թուրքիայում քրիստոնեաների զինուորական ծառայութեան վերաբերութեամբ, որը վճռել է թուրքական պարլամենտը: Թուղթը բացատրում է, թէ տիեզերական պատրիարքարանի հօտը ինչպէս պէտք է վերաբերուի պետական նոր օրէնքին: Թուղթը վկայում է, որ յայն ժողովուրդը, միւսների հետ միասին միշտ պատրաստ է աշխատել ընդհանուր հայրենիքի յաջողութեան և բարգաւաճման համար, ուրախութեամբ ընդունում է զինուորական ծառայութեան մասին օրէնքը, մանաւանդ որ, խուսափումն այս օրէնքը կատարելուց կամ՝ ընդդիմութիւնը չի համապատասխանում յոյների ազգային շահերին: Յոյների, որոնք կայսրութեան միւս ժողովուրդների համեմատութեամբ ի հարկէ, ոչ վատ են և ոչ ցած, այլ միւսների հետ հաւասար ընդունակ են սահմանադրական քաղաքացիների պարտքերը կատարել: Բայց, որովհետև այլակրօնութիւնը կարող է առաջ բերել զանազան թիւրիմացութիւններ և վտանգներ քրիստոնեաների կողմից, որոնք կոչւում են ի ծառայութիւն մահմետական պետութեան զօրքի մէջ, պատրիարքարանը շտապում է իւր կողմից անհրաժեշտ միջոցները ձեռք առնել այս կարևոր գործում, երկիւղի ամենայն կասկած հեռացնելու համար:

Ի մասնաւորի, պատրիարքարանը կառավարութիւնից